

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	12 ֆր.
սարեկան	6
վեցամսեայ	6
Արսասահմանի համար	15
սարեկան	8
վեցամսեայ	8
Ամերիկայի համար	3
սարեկան	1.50
վեցամսեայ	1.50

Իմանուելան տղը առաջին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսին համար 20 սանթրիմ է. երեսին աւելի ակազմներու համար 20 0/0 զեղչ կը լայն:

Վառնայի համար
ձևով 10 սանթրիմ

ՇԱՊՈՒԻՆ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՒԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԶՈՐԵՔՈՒԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

Նախկին իր անունը կրկին
խորհրդանունն հաս
ցիւնը

Редакция на русском
"Наружный"
Варна

Redaction du journal
"Обзорный"
(Bulgare) Yarna

Պուշկարիոյ համար
ձևով 15 ՍԱՆԹՐԻՄ

Արսասահմանի համար
ձևով 20 ՍԱՆԹՐԻՄ

Գրութիւնք եւ չեւ
ստիւր

ՇԱՊՈՒԹԻ Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒԹՅԱՆ ԲԱՇԽՎԻՆԸ ՊԵՏԻ ԵՎ ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐԷ

ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱԻ

Քրիստոս յարեալ ի մեռելոց... ու
զանգահներն բամբ ձայնով
Գործնեան վեհ գործունէն՝ ու
զորմելի մարդկութեան
կաւետեն կեանք. սէ՛ր, յո՛յս,
բարի՛ք, գոռ ու գրգռիչ շնչոտերով
Հոչակելով յաղթանակը եղբայրա-
կան գթութեան:

Քրիստոս յարեալ ի մեռելոց...
քանի զեռ ցորտ, ամայի
Լուս մի անկիւն թշուառ մը կայ,
յարկի մը տակ խոնաւ, ցած,
Որ գտանանման, պող նայուածքով
դէպի երկինք կը նայի,
Կարծես վերէն սպասելով հացի պա-
տառ մը շորցած...

Քրիստոս յարեալ ի մեռելոց...
երբ զեռ մանուկ որբիկներ
Որոնց երկինքը խոտապառ Մեծ
Նահատակն Մարդկութեան,
Կը քաջըլուն հոս հոն ցրուած,
արդէն մռայլ անտարբեր,
Իրբեւ տանիք ունենալով մեծ կա-
մայր բնութեան...

Քրիստոս յարեալ ի մեռելոց...
երբ երկրի սեւ խորներէն՝
Օրհներգութեան և աղօթքի ձայ-
ներուն հետ գրկուած՝
Սեւ անէծքի շնչոտ թռիւն թըշ-
ուառներու կուրծքէն,
Վերջին բողբ մը ուղղելով դէպի
երկին, դէպ՛ Աստուած...

Քրիստոս յարեալ ի մեռելոց...
երբ մենք վայրագ ու դժգոհ
Իրբեւ սիրոյ նահատակի օրինակով
ազգուած,
Սէ՛ր կը գոչենք որոտագին մեր
չուրթներով անարժան,
Մինչ մեր ձեռքը եղբայրական ա-
րիւնով է ներկուած...

ՀՐԱՆՏ

Բարիք

ԲՆՈՒԹԻՒՆԸ ՅԱՐԵԱԻ

Մարդկութեան բարեմտորդի,
Յիսուսի մարտիրոսական մահան
տարեդարձի հետ, որը կարծես
նախախնամութեան որոշումով,
Ի թէ այդ տեսակ որոշումներ կան,

տեղի է ունեցել զարնան սկզբում,
յարութիւն է աւելում, այսինքն
վերակենդանանում է և բնու-
թիւնը. Զմբան դաժանութեան
ճնշումից երեսութեամբ մեռած
ժառերը տերեւոտում եւ ծաղ-
կազարդվում են, կորուած ծա-
ղիկները երեսան գալով սփռվում
են խայտաբղետ ազամաններ
պէս դաշտերում և իրենց բու-
րումով հաճոյալի դարձնում ամ-
բողջ միջնորոտը, անբերութե-
ամ թռչնիկները երեսան են
գալիս և իրենց գեղգեղներով
հնչեցնում աշխարհը. գետերն,
առուակները և աղբերակները ա-
զատվելով իրենց մահացնող սա-
ռուցէ պատեանները կարկաչե-
լով կամորոտագոտ թաւալում են
իրենց խոշոր ու պղտիկ ժիր ա-
լիքները դէպի նպատակ. կեան-
քը սուղեղում է, ամեն հիւլէ
ապրում և ստեղծագործվում է,
նոր նիւթ, նոր տարր, նոր ա-
բարած ստեղծելով:

Այդ համառիւկեցային եռու-
պետումից յետ չէ մնում և մար-
դը. նրա թմբած եռանդը հը-
րահրվում է, արիւնը եռում ու
նա ապրելով դիմում է դէպի ա-
ռաջ, դէպի անհատական և ցե-
ղային գեղեցիկ, երանաւէտ հո-
րիւնները, միշտ ստեղծագոր-
ծելով, ապրելով, ուժ սպասե-
լով:

Հայր իբրեւ մարդ ի հարկէ
յետ չէր կարող մնալ այդ համաշ-
խարհային և համաշարերային
կենսական եռուպետումից, նա էլ է
յառնում, որչափ իր ծիրով
ուժերը ներում են, ուզում է
ստեղծագործել, երանաւէտ կեան-
քի ուղին փնտռելով դիմել դէ-
պի ապագայ, թէ իբր անհատ,
թէ իբր ցեղ, երբեմն ուժեղ թա-
փով, երբեմն թոյլ, յաճախ իր
գերազանց ճիգերում խոյտանդ-
վելով, մեռնելու, վերջնապէս մա-
հանալու շարի ջախջախելով,
կարծես յաւիտեանք պէս չը յառ-
նելու շարի: Սակայն դա դեռ ի-
րական մահ չէ, նրա ուժերը
միայն ընկճվել են դժգոհ ձմե-
ռից, ք ու վտարիկներով, տա-

րերային ջախջախիչ արհաւիրք-
ներով և իրական գարունը գա-
լուն պէս նա կը յառնէ:
Ուրեմն բնութեան հետ թող
և յառնէ հայութիւնը:

ՎԱՐՇՈ

ՉԱՏԿԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՔ

Չատկի շարաթ երեկոյին էր,
մի ամպոտ ու քամոտ օր: Ես փա-
խանակ եկեղեցի գնալու դիմեցի
ձովափնեայ պարտէզը, ուր ա-
րարիչ բնութեան մեծութիւնը
և վեհութիւնը աւելի հրաշալիս-
րէն է տեսնվում, քան ձեռու-
կերտ փոքրիկ, մռայլ շինութիւն-
ները մէջ, որոնք մարդկանց ա-
ղօթարաններն են:

Տեղաւորվեցի ուղղակի ձովին
նայող թմբի վրայ, որի հիմք
անդունդի մէջ լեռկ ժայռ էր:
Մովը փոթորկած էր, վրիժխարի
ալիքները շարժուն լեռների նը-
ման գալիս գրկվում էին կանգ-
նած թմբի հիմքին: Հրաշալի
էր հսկայ ալիքների ուժգին գը-
րոհը, ալիքների, որոնք բա-
շաւորված արծաթ փոփոքներով
հարիւրաւոր առիւմների մոնջո-
ցով գալիս դիպչում են ձովի
եղունքին կարծես գոռալով «ա-
զատ ճամբա տուէք մեզ, ձովի
ընդարձակութիւնը քիչ է մեզ
համար»:

Հիւսցած դիմում էի մաքա-
ռումի այդ յարձակողական եւ
գիմարումի վեհ պատկերը:
պայքար մղողը ձովի էր, կուրծք
գէմ տուրը թմբոտ եղբը իրեն
ժեռոտ հիմքով, Այդ հսկայա-
կան պատկերի ազդեցութեան
տակ իմ երեսակայութեան մէջ
վերանորոգվում էին բոլոր մա-
քառումները հին և նոր, անաս-
նական և մարդկային կեանքից,
ու խորատուղված այդ մտածում-
ների մէջ: Ես կարծ մէկը ու-
սիցս բռնելով ինձ ետ քաշեց:

— Ի՞նչ կընես Մուսիօ, այս
ատեն, ինչի պղծափ եղբին մո-
տիկցե՛ր ես, նայե՛ ուսի՛ր, տակի
հողը ճաթած է, չէ՞ս վախնար

որ փլի ու դուն ալ ձովը ինչապ
դիտում՞ար այդ շարի մօտիկցար...

— Այ, Միգօ, պատասխանեցի
ես ճանաչելով Տարոնցի ճանօթ
գործաւորին: Իրաւամբ չէ. ձո-
վին էի նայում և անզգայաբար,
հիացման մէջ, այսչափ մօտիկցել
եմ, Տեսնում ե՞ս ինչ խոշոր ա-
լիքներ են և շափաղանց ուժեղ,
ցամաքի հետ կուտում են, ուզում
են վեր, այտեղ բարձրանալ:
Բայց դու ի՞նչ գործ ունես այս-
տեղ Միգօ, եկեղեցի շէս գնա-
ցել: այսօր Չատկի թաթախման
երեկոյ է, նաեւ հաղորդութեան
օր:

— Եկեղեցի գացի, ախրամած
եւ վշտաբեկ ձայնով պատասխա-
նեց Միգօն, եկեղեցին լիքն էր
զարդարված հարս ու աղվիկնե-
րով, ճիճերով, կրկիրով միտքս
իմկաւ, մեր տուն ու տեղ, լմ
քուրեր, սղբերափ, հարսներ,
ճիճեր, մեր դրկցի իմ սիրած
աղվիկ նուշոն: Հիմակ բտոնք բ-
մենքն էլ չը կան, որ մէկ բանտն
է, որ մէկ սպանուած: որ մէկ
քիւրո ու թուրքի հարէմները
տարուած է, հասկցայ որ մի
համար Չատիկ չկայ, ոչ էլ
թաթախում: Մը երկիր, տուն
անց, թաթախում է արիւնի
մէջ: Սատանէն գլուխս դարձուց,
մտքս անցաւ իմամ եկեղեցիին
մէջ, գտէրտէր սեղանէն վար առ-
նեմ, հարս, աղվիկ ճիճեր պի-
մեր տրոբեմ, եկեղեցին քարու-
քանդ բնեմ, մէկ ալ խելքս գը-
լուխս եկաւ, թողի եկեղեցիէն
դուրս փախայ և շունչս էտեղ
առի, մէկ էլ տեսնում դուն հոս
կայներ ես, քեներն մօտիկ,
ուչքդ վրէժ չէ... վախցայ, մեզ-
քըս ինչ պահեմ, մաքես անցաւ
թէ ստան բոգլոյն էլ իմի-
նիս պէս դաժանութիւն է...

— Այս, Միգօ, մեզ Չատիկ եւ
թաթախում պէտք չէ, քանի՛ որ
մեր երկիրը արեան մէջ թաթախ-
ված է: Ինչպէս բոխր ամբողջ
ցեղով արեան մէջ ենք: Մեզի
մաքառիլ պէտք է: այս ալիքե-
րի նման: Տեսնում ես ինչ ուժ-
գին գորհներ են տալիս, այսօր

չէ վաղը այս թու մըր, մայր կը քանդեն և ազատ ճամբա կը բանան. երբ կրկին նեղվեն կրկին կը մաքառեն, գրոհ կատեն և ճամբա կը բանան: Մոռցիր դուն այսօրվան տեսածդ զուգված զարգարված հարու աղջիկները ճիճի պիճի կտրիճները, որոնց կտրիճութիւնը ճիճի պիճիութեան մէջ կը կայանայ: Սոսի. բիր մարտակալ այս ալիքներէջ, սովորիր կուրծք տալ և դիմադրել թշնամուն այս մայրից: Երկիրը թուրքը, հայրենիքը, մեր կարիքը պարտութիւնները միտք ինկած միջոցին միշտ եկ այստեղ, և այստեղից դու, սիրտ, ուժ, զօրութիւն և քաջութիւն կտտա նաս որովհետեւ գողափար կը կազմես մաքառումի և գիմադրութեան վեհ լինելու մասին:

Վ.Ս.Ր.Դ.Օ

ՃԱՐՈՆԻԱ ԵՒ ՖՐԱՆՍԱ

«Ըր ժուռնալը թերթի Մանչեսթրի, թղթակիցը Նոսո, որ գերի ինկաւ ճարտարներու ձեռքը Մուքսէնի քով և երկար ատեն է որ անոր մասին լուր մը չըկար. առայժմ թօքիոյն հեռագիր մը ուղղած է իր թերթին ապրիլ 8 թիւը կրող:

Նոսո կը հաղորդէ որ ճարտարները ընդհանուր համաձայնութեամբ Ֆրանսայի բացատրութիւնները, ուսական նաւատորմի կամբան գրտ. նուելու առթիւ, իրաւաբանական և միայն դիւրին կերպով ազատելու միջոց կը համարեն:

Ի հարկէ ճարտարները կըմբռնեն

Ֆրանսայի իբր Ռուսիոյ դաշնակցի անյարմար կացութիւնը, բայց անոնք խնդրին վրայ կը նային իրենց հրավառուած հայրենասիրութեան տեսակէտով: Անոնք լուսթեամբ կը հետեւէին ձիպութիւն մինչեւ Մատակասկար Ռուսական նաւատորմի ընթացքը: Այժմ երբ այդ նաւատորմի զը գտնուի Հնդկա-Չինական ջուրերուն մէջ, ճարտարները կը հաստատեն որ Ֆրանսական գաղթականութիւնները իբրեւ հիմնատեղ ծառայած են նաւատորմի մը, որուն թէեւ ոչ յայտնի խոստովանուած նպատակն է ձաքոնի և անոր ժողովուրդին խորտակումը: Այդ պատճառով կըսեն անոնք, ամբար թօլօ իրաւունք ունի յարձակիլ ուսական նաւատորմի վրայ որ որ գրտ. նուելու անոնք: Թէեւ յոյր քաղաքական անձերը ինքզինքնին կը զբաւեն բացարձակ յայտարարութիւններ ընելէ:

Որչափ ալ ինծի համար դժուար ըլլայ, կը շարունակէ Նոսո, աչքի առջեւ ունենալով այն անձնական համակրութիւնը, որ զիս կը կապեն ուս զօրքերուն և ժողովրդին հետ, բայց պէտք է որ անկեղծօրէն խօսիմ: Մայր. Արևելքի մէջ ապրող ամեն մէկ ֆրանսացիի համար պարզ է որ ճարտարները շատ լուրջ կերպով կը վերաբերուին դէպի այն իրողութիւնը որ թշնամի նաւատորմի մը կը կենայ ֆրանսական նաւահանգստի մը մէջ, որը հազիւ վեց օրուան ճամբայ հետի է իրենց ափերէն: Ճարտարները բարձրաձայն կը յայտարարեն որ առանց ֆրանսական աջակցութեան, ուս նաւաբաժինները կեդրոնացան կէտ չպիտի գտնային և չպիտի կարենային պայքարելու պատրաստութիւն տեսնել:

Թէեւ ճակատամարտ մօտիկ կերբերի, բայց երկու հակառակորդ ամբար լինելու դիտաւորութիւնները դաղ-

տնի կը մնան: Արդեօք ուսական նաւատորմի ձեռ հարուածի մը վտանգը կսպանան: Արդեօք ան պիտի շարունակէ խաչածեւել շինական ծովու մէջ թօլօյի սահմաններէն հեռու: Թօլօն ուս նաւատորմի ճարտար մշտական վտանգ մըն է որը մեծ ազդեցութիւն պիտի ունենայ հաշտութեան բանակցութիւններու վրայ: Ոչ ոք գիտէ, կարծես թէ ճարտարները այժմ աւելի անհանգիստ են կամբանի միջադէպի առթիւ ինչպէս երբէք անհանգիստ չեն եղած ուսական նաւատորմի դէմ:

Եզրակացութիւնը այն է, որ եթէ Ֆրանսան անկեղծօրէն չէզոքութիւն պահպանէր, ուս այս նաւատորմը երբէք ճարտարներու համար ազգային վտանգի գոյնը չը պիտի առնէր: Կացութիւնը այս է, կը վերջացընէ Նոսո, և պէտք է ուշադրութեան տանուի:

Այս խնդիրը այժմ կարգադրուած է, որովհետեւ Ֆրանսական կառավարութեան կարգադրութեամբ ուսական նաւատորմի խնդրի նիւթ եղած ֆրանսական նաւահանգստէն արդէն հեռացած է, Հեռագիրները արդէն մոթ կերպով կը հաղորդեն որ ուսական նաւատորմի ֆրանսական ջուրերէն դուրս գալուն պէս ծովային պատերազմը արդէն սկսուած է, սակայն որոշ և ճիշտ տեղեկութիւններ կը պահպին:

ՌՈՒՍԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ

Այս վերջին օրերու մէջ աչքի դարձող երեւոյթները կը կազմեն ցարին մէկ հրովարտակը սեփականութիւնները պահպանելու մասին զիջադիւններու յարձակումներէն և աւերումներէն: Գիտութեանց ճեմարանի նա-

խագահ մեծ իշխան Կոնստանթինի մէկ յանդիմանողական շրջաբերականը գիտականներուն, որոնք իրենց համոզումներով և ստորագրութիւններով միացած են սահմանադրութիւն պահանջող քաղաքացիներու, յայտարարելով թէ առանց ազատական ուժերի մը չի կրնար գոյութիւն ունենալ և ազատ գիտութիւն: Մեծ իշխանը գոնէ իր հրատարակած շրջաբերականով, այն կարծիքը կը յայտնէ որ Ռուսիոյ մէջ գիտութիւնը ազատ է և ամեն լուրջ և իր գործին նուիրուած գիտական կրնայ իր գործին ծառայել եթէ քաղաքական խնդիրներով չըբաղի: Ու երբ գիտունները այդ տեսակ խնդիրներով կը զբաղին անոնք վատ օրինակ կը հանգիստանան թէ ուսանողութեան և թէ ժողովրդին համար:

Մեծ իշխան մը յայտնապէս ասկէ տարբեր կարծիք մը չէր կրնար յայտնել. այնպէս որ այդ շրջաբերականը զարմանքի նիւթ մը ըլլալէ շատ հետի է:

Սակայն հոչակաւոր գրագէտ Թօլսթօն վերջերս շատ յետադիմական մտքեր կը յայտնէ: Որոնցմէ ամենէն աչքի զարնողը թերեւս այս օրերու մէջ յայտնուած է:

Տեսակցութեան մը մէջ թօլսթօյ յայտարարած է, բոլոր ուսերը, մանաւանդ ինքնապարկիները պէտք է որ պաղ տուչի մը ենթարկուին, բանտարկուելով, որպէս զի լաւ մը խորհին: Երբէք ուս մտաւոր դասակարգը այնչափ ինկած չէ եղած, որչափ այսօր ծնողները իրենց գաւակներուն վրայ ունեցած իշխանութիւններն կորսնցուցած են, ինկած մակարդակի մը հասած են:

Սրտասարգութիւնը կը հրաժարի իր ուսումը շարունակելէ: Եթէ քաղաքական բարենորոգումներ տեղի չունենան, Աստուք ուսանողութիւն կուզեն, և ծնողներն ալ կը

Ա. ԱՄՏԻՏԵԱՏՐՈՎ
ՎԻԿՏՐՈՒ Պ.Վ.ԼՕՎ.Ա.
(Տօնախմբութիւն)
Գրագէտի յիշողութիւններէն, Ամրան արկածներ քաւական սուրճիակի հասարակութեան վեհ)
(Թարգմ. ուսերէնից) 24
Չ.
(Շար. Ամխորդ թիւն)

է այս տեսակ գրչերները քնել: Սիրոյ, սարփանքի գրչեր է:
Ամի լա նիւի է քիլլ...
Տիւ շիւլի, Տիւ շիւլի
Ամբողջ կողորդով երգեց և ծանրութեամբ տեղաւորվեց մահակալիս վրայ:
—Կամաց, անմիտ մարդ, առարկեցի նեղացած, ամբողջ առեւը կարթ նացնէք, կը զարթնի և Վիկտորիա Պավլովնան:
—Վիկտորիա Պավլովնան:
Նա կատաղութեամբ հռահաց, և խորամանկութեամբ աչքը շարժելով, ակոսները, շան սուր ակոսների պէս բացեց... Սիրտս ուզեց մի լաւ ծեծել զբան:
—Վիկտորիա Պավլովնան, հէ, պաշտօնակից, ի՞նչի զարթնի քանի որ դեռ քնած չէ. հէ:
—Ձեզ համար աւելի վատ, ուրեմն նա ձեզ լսում է. և զուք կարծում էք որ այդ ձեռով կարող էք նրան հաճելի լինել...
—Չէ լսում. պաշտօնակից նա ոչ ինչ չէ լսում. չէ լսում եւ չէ լսում, թէեւ քնած չէ: Ահ, ի՞նչ է, հանելուկ է չէ, պաշտօնակից. քնած չէ, բայց չէ լսում:
Որովհետեւ
Ամի լա նիւի է քիլլ,
Տիւ շիւլի տիւրիւ,
Իսկ մենք ձեզ հետ...
—Ձեր մասին խօսեցէք բարեկամս, խորհուրդ տւի ես Բուրուներն. կարելի է ասել ոչ այնքան բարեկամա-

կան մեղմութեամբ:
Նա մահակալից վեր կացաւ, ասելով:
—Այսինքն, ներողութիւն, պաշտօնակից, միայն ես եմ, միայն ես ակամար:
—Կեցե՛ք. խնդրեմ, ի՞նչ հիմքով ինձ պաշտօնակից էք անւանում, ես ինչի ձեր պաշտօնակից եմ. երբէք զուք ինձ հետ այդ ձեռով չէք խօսել...
Բուրուներ աչքերը չոց վրաս և խորին ինքնազարմացումով սանց.
—Բայց ի՞նչ, ես երբէք այսպէս չեմ արել, ի՞նչի այսօր այսպէս:
—Որովհետեւ առաջին անգամն է որ զուք այսպէս...
—Կարելի է, խոնարհութեամբ համաձայնեց Բուրուներ:
—Երկրորդ որ զուք ինչ որ ողբերգութեամբ էք եկել և այդ պաշտօնակիցն էլ ձեր դերի մէջ է մտնում:
—Իբրև մէջ, հարցրեց նա վայրենաբար և բուժ կերպով նայելով ճրագին:
—Այո, ինչ որ շինու է. խաղում էք, ցուցադրում էք:
—Ես ցուցադրում եմ. ես,
Նա կատաղել էր ուղում, բայց յանկարծ թէ ինձ և թէ իրեն համար անսպասելի կերպով լացեց ու դէմքի վրայով կարկսի պէս սկսեցին թափվել ծանր ու պայծառ արցունքի կաթիլները... Ես տեղիցս վեր ցատկեցի:

—Ալէքսէյ Ալէքսէյիչ, սիրելի. Բուրուներ՝ ծնկների վրա ընկաւ, ու երեսը թաղեց բարձի մէջ, Դժաւութեամբ ես նրան ջուր խմցրի... Նա իմ ձեռքերս բռնեց, սեղմեց այնչափ, կարծես ուզելով բարեկամական զգացումներ մի ամբողջ սայլ դուրս թափել:
—Ալէքսանդր Վալենտինովիչ, շարունակեց Բուրուներ, շննջ նա բոլորովին մանկական եղանակով և վրտացած.
—Երա մօտ մէկը կայ.
—Ո՛ւմ մօտ, ո՛ւր, էլի ի՞նչ պատահեց:
Ես կրկին սկսեցի ձանձրանալ. նեղանալ. սաստանան կրկին զրկեց այս ողբերգական ձանձրացողին Նա այս տարածամիտ, Բուրուներ շարունակեց շննջել.
—Մէկը կայ Վիկտորիայի մօտ. ես անձամբ տեսայ, թէ ինչպէս ներս մտաւ. այս, խորասի վրայով. առաջ սուերը երեւաց պատի վրա, պայծառ լուսնի տակ, ուրաւագծերով, պարզ տեսնվում էր... և յետոյ անհետացաւ: Եւ ես լսեցի որ զուք ճոպ. և յետոյ սենեակի պատահանների վարագոյնների վրա նա կատեցի այդ մարդի ուրաւագիծը... Ես տեսայ:
—Ձեզ ուղղակի այդպէս է երեւցել. զուք ձեր սիրահարութեամբ արդէն բանագուշանքի մէջ էք ընկել.
Բուրուներ կանգնեց և համոզվածօրէն զուր շարժեց:

ձայնակցին : Ձաւակները իրենց հայրերուն կը սորվեցնեն . անոնք ալ գիւղացիներուն : Պարզ է թէ երկրին ինչ կսպասէ :

Թէեւ հանճարեղ , բայց խառնաչփոթ քաղաքական կեանքի հայեցաւիտներ ունեցող Թօլսթոյ մը կուգայ ուսական ժողովրդին ներկայ ընդվզումը դատապարտելու ցարբուուն և ցարբի ծառաներուն հետ միասին : Արգետօք ո՞վ աւելի մեղաւոր է այն հայրերը , որոնք իրենց գաւակներուն յայտնած ճշմարտութիւններուն դառնութիւնը ըմբռնած ըլլալով անոնց կը ձայնակցին , թէ հանճարեղ , ցարբի հալածանքներէն միշտ ազատ նոյն այգ ժողովրդի լոնիւայն պաշտպանութեանը շնորհիւ , Թօլսթոյ մը , որ « Ձարին չը դիմադրելու ոչխարային սկզբունքներն » նսեւէն ինկած կուզէ աշխարհը շտկել հարկւր միլիոններով մարդ անհատները բարոյացնել վերջը :

ԿՐԷՏԷ ԵՒ ԱԼՊԱՆԱ

Եւրոպական պետութիւնները առայժմ համաձայն չեն երեւիր կրէտէի Յունաստանի միացման եղելութեան հետ և այդ պայտօնապէս յայտնած են կրէտէի ժամանակաւոր իշխանութեան : Յոյն դեպքան ալ Սուլթանին յայտարարած է որ յունաց կառավարութիւնը ոչ միայն համաձայն չէ , այլ եւ թէ Յունաստանի և թէ կրէտէի մէջ պիտի աշխատի այդ մտքէն ետ կեցնել :

Մանաւառք եւրոպացիները կը վախնան որ այդ եղելութիւնը քաջալերութեան պատճառ ըլլայ և Պուլկարիոյ համար , որը կրնայ Մակեդոնիան նոյն ձեւով իրան կցել , Պուլ-

կարիան անկախ թագաւորութիւն հռչակել , և Եւրոպան ստիպուի եղած իրողութեան հետ հաշտուիլ :

Անցեալ անգամ հաղորդած էինք մեր ընթերցողներուն որ Ռուսական իշխան մը Գիկա Պուքրէշի մէջ ալպանական յեղափոխականներու համաժողով մը պիտի գումարէ և իբր թէ Ռուսիէն կառավարութիւնը արգելք պիտի հանդիսանայ այդ ժողովին :

Այժմ կրիմեանք որ « Տէյլը Էքսպրէս » թերթը ապրիլ 12ին Պուքրէշէ հեռագիր մը ունի հրատարակած որով կը հաղորդուի թէ իշխան Գիկա ալպանական համաժողովը բացեր է Պուքրէշի մէջ , և յայտարարել է որ Պորթո Սարաֆօֆ խոստացեր է օգնել իշխանին , ինչպէս նաեւ ժէնէրալ Ռիչիտտի կարէպալտի խոստացեր է 10000 իտալացի կամաւորներ զըրկել Ալպանիա , այդ երկրին անկախութիւնը ձեռք բերելու համար ըսկուած կուտի ատեն :

Իշխանը յայտարարել է նաեւ որ բոլոր մեծ պետութիւնները Բացի Աւստրիայէն , պատրաստ են զինքը Ալպանիոյ վեհապետ ճանչնալ :

Թէ ինչ աստիճանի ճիշդ են այս բոլոր անգեղութիւնները , մենք ի հարկէ երաշխաւորել չենք կրնար , բայց ասկէ պարզ կերելի թէ հետի չէ այն օրը որ Սուլթան Համիտի զըլխուն պիտի պայթի և Ալպանական ինքիբը , ու զիւանագիտական աշխարհը իր անջուր ցըցուած պիտի տեսնայ և Ալպանիա մը որ կուզէ զէնքի ուժով իր անկախութիւնը ձեռք բերելու հակառակ այն գերընական ջանքերուն որոնցմով կուզուի իրերու կացութիւնը պահպանել թուրքիոյ վերաբերմամբ :

Արարական , Մակեդոնական , Հայկական և Ալպանական կարգ մը եր-

կար ու կնճռոտ խնդիրներ , որոնք օր մը չէ օր մը պիտի փրթեցնեն այն խոշոր հրդեհը , որուն գոհ պիտի երթայ Թուրքիան : Բայց թէ ե՞րբ , ի հարկէ այդ ալ յայտնի չէ :

ՅՐԱՆՍԱՅԻ ԵՒ ՌՈՒՍԻՈՅ

ԳՈՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

—)օ(—

Բաւալան չէ որ ուս կառավարութեան բարեկամութիւնը Պրանսայի քան մի միլիոնները կլլեց , այս օրեր ալ քիչ մնաց որ իսէր այդ բարեկամութեան չըրանսակտն հասարակագետութիւնը փորձանքի մէջ իյնար , ու թերեւս Անգլիայի բարեկամ կուն միջամտութեան շնորհիւ էր որ Պրանսան ազատեցաւ այդ փորձանքներէն :

Այդ փորձանքը հետեւեալն է .

Լուս պալթիկեան նաւատորմի զգացեր համախմբուել էր Գամրան ծոցի մէջ որ Փրանսացիներուն կը պատկանի , ու քանի մը օր ի վեր հոն կըսպասէր և թերեւս դեռ շատ պիտի սպասէր , եթէ ճարճ կառավարութիւնը այդ շընդունէր իբրեւ Փրանսական շեղօքութիւնը զեղծող երեւոյթ մը և խստիւ չը բողոքէր . միեւնոյն ատեն Անգլիոյ միջամտութիւնը ունեցան իր պղտեցութիւնը . Փրանսական կառավարութիւնը շտապեց Բեթերսպուրկի իր դեսպանին և հնգկաշինի կառավարչին պէտք եղած

խիստ հրահանգներ տալ , ուսական նաւատորմի զգաց զառաջ ֆրանսական շուրթէն հեռացնելու համար : Եւ այդ առթիւ « Էդգօ տը Բարի » թերթը հետեւեալը կը հաղորդէ . — Պրանսական կառավարութիւնը պայտօնական սեղեկութիւն ստացաւ որ ուս ծովակալ Բօտեէնսովըն . կից թողուցեր է Գամրան ծոցը և անորոշ ուղղութեամբ մը գացեր էր :

Մէկ ուրիշ հեռագիր մը ալ Սալոնէն կիմացնէ որ Փրանսական Հնգկաշինի կառավարչին վարչութեան պետը մէկ ծովային սպայի ընկերակցութեամբ իրաներ է ուսական շարս շոգենաւերը , որոնք կուզէին մեծ քանակութեամբ քարածուխ բեռըրնել , սակայն անոնց արտօնուեցաւ շատ քիչ քանակութիւն միայն վերցնել . քանի որ նաւատորմի զ ստիպուած եղաւ հեռանալ Հնգկաշինէն , թողոյին ալ Եւս միայն բան մը կը մնայ , այն է դիմաւորել նաւատորմի զը :

Այժմ կրիմացուի որ Նիկոլաւայարը անձամբ Բօտեէնսովէնսկուն հեռագրով հրամայած է Գամրան ծովածոցէն հեռանալ :

Անշուշտ Փրանսական կառավարութիւնը շատ դժուարութեամբ և ստիպեալ համաձայնեցաւ իր դաշնակցին առջեւ , այս նեղ կացութեանը մէջ , այսպիսի պահանջներ դնել : Բայց ուրիշ կերպ ալ չէր կրնար ընել , որովհետեւ ճարճացիներու մէջ ար-

—Ոչ , Բանդաղուշանք չէր : Միայն ես չէի . ի վան Աֆանասիոն էլ կար : Այժմ նա այնպէս հսկում է , տերրաւոր վրա : Ես պատերազմի որ կենայ , մեռի կանգնած , բայց ով որ վիկտորիայի մօտից դուրս կը սլքտայ , բռնի իսկոյն :

—Ես միայն ձեռքերս կարողացայ շարժել :

—Դուք զփել է՞ք Բուրուն , չէ՞ որ այդ լրտեսութիւն է , ստորնութիւն . եւ ինչ իրաւունքով :

—Առանց իրաւունքի , ակռաները փայլեցնելով ասեց նա :

—Լաւ չէ , Բուրուն , շատ ազեղ է նոյնիսկ...

—Ստորնութիւն , ցածութիւն , վերջացրեցէք , առարկեց նա...

—Էլ ինչ վերջացնեմ . դուք արդէն ասուէք :

—Թո՛ղ ցածութիւն լինի . թքել եմ .

Բուրունը կրկին ինքզինքը տիրապետելով սկսեց չը հարթած ձեւանալ :

—Ձեր խօսքերից , ծաղրանքով շարունակեց նա , ոտքերի վրա տատան վերով , տեսնում եմ որ դուք իրաւունք ունէք , որ մենք իբրբեւ հետ իրօք պաշտօնակիցներ չենք . շատ ախոս . իսկ ես եկել էի ձեզ որսի հրաւերելու...

—Ի՞նչ որսի էք եկել կանչելու :

—Այ , թէ ինչպէս մենք կը հետեւինք այն կտրիչին... եւ դուրս կը վանենք... պէտք է արատաւորեմ... հա , հա , անձեռնմխելի թագուհի ,

Վասիլիսա գեղուհի :

—Բուրուն , դուք ասուէք . դուք թշուառ մարդ էք . մտածեցէք թէ ի՞նչ աղատութեան մէջ էք մտնում : Ձե՞ որ վաղը անկարելի կը լինի ձեր ձեռքը սնդմել :

—Ես ուսեր շարժելով շարունակեց .

—Ինչպէս կը հաճիք դուք կը մընաք ձեր ազնիւ զգացումներով , իսկ ես ցանկանում եմ իմ հետաքրքրութեան գոհացում տալ :

—Հրաշալի հետաքրքրութիւն . այդ լրտեսութիւն է , Բուրուն , եւ շատ վատ լրտեսութիւն , անիրաւի , բայց ոչ հետաքրքրութիւն :

—Կարծիքները ազատ են , առարկեց նա շինծու անտարբերութեամբ .

—Վերջապէս ո՞ւմ մասին էք կասկածում դուք , ո՞վ կարող է այնտեղ լինել եւ ո՞րտեղից : Մենք երկուսս էլ այստեղ եւք . Աֆանասիոն դուք պահպանէք զրիւ տերրաւոր վրա . ձեռնոցը ես լսում եմ որ Անիմային բակում երգել է սորվեցնում . Ես դեռ անմիտս Նրան սիրում եմ . վանիչկան հաշի մէջ չէ եւ կարծեմ տանն էլ չէ : Ահա ձեզ այստեղ գտնելուց բոլոր սղամարդիկը . եղէք եթէ ոչ տրամաբանական , գոնէ թուարանական : Դժարութիւնը կրեցէք համբել :

Բուրունը կամակորութեամբ գլուխը տարբերում էր :

—Ոչ ոքի մասին չեմ կասկածում , բայց պէտք է բռնեմ , չը զիտեմ թէ ում պէտք է բռնեմ : Այս մասին յուսով եղէք : Կը հաս-

կանանք թէ ինչ թաշուն է եւ թէ մեր գեղեցկուհին ինչ ճաշակ ունի :

—Դուք արքած էք եւ դրա համար էլ այդ տեսակ անկարգութիւններ էք արւում :

—Ոչ , ես հարբած չեմ . ես դժբախտ եմ , պատասխանեց Բուրունը կուրծքը ողբերգական ձեւով ձեռնելով . եւ քանի որ ես դժբախտ եմ , փափագում եմ բախտաւոր մարդին տեսնել . ինձ համար դրաւորը այն է որ հասկանամ թէ ո՞վ է :

—Ես , ուղղակի ձեզ չեմ թողնի որ գնաք :

—Ի՞նչ :

Եւ այդ խօսքի հետ Բուրունը գրպանից ատրճանակը հանեց , շարժեց արտայայտիչ գէմքով ու յետոյ կրկին գրպանը զրեց ասելով .

—Տեսա՞ք :

—Ի՞նչ է , դուք ինձ վրա ատրճանակ կը պարպէ՞ք , առարկեցի ես , խոստովանում եմ , բաւական արհամարհոտ կերպով—Ես այդ ողբերգական ատրճանակացուցումներին չեմ հաւատում . ով ատրճանակի հետ շատ է խաղում , նա հազաւէտ է արձակում . բայց Բուրունը լրջօրէն պատասխանեց .

—Վասնետեմ եմ որ ես այդ անելու համար բաւական արքած լինեմ . ու գնաց գէպի դուր . չէ՞քի վրա դերասանի պէս կանգնեց ու դեղնածղէմքը զոգացող ծնօտով դարձնելով դէպի իմ կողմը շարունակեց .

—Բայց ես կարծում էի թէ դուք

էք վիկտորիայի մօտ . էհ , բախտատաւոր է ձեր Ստաւուսը...

Եւ աներեւոյթացաւ : Ու եւ էլ ըմբռնեցի որ այդ մարդը եկել էր ինձ սպանելու եւ կսեցի մրսել :

Շփոթումս անցնելով ես ինձ շատ յիմար կացութեան մէջ զգացի . Արդ եօք Բուրունին իրօք թուացել էր թէ վիկտորիայի մօտ մէկը կար , այդ միեւնոյն է . եթէ այդ երկու յիմար արքածները սէտք է քաջ գան նրա դրան առջեւ , մեծ խայտառակութիւն պէտք է լինի . իսկ եթէ նկարիչը արդարացի է , այն ժամանակ նրա ողբերգական տրամադրութեամբ եւ ատրճանակով միասին , խայտառակութիւնը արիւնոտ պէտք է լինի : Պէտք էր գնալ եւ Բուրունին ու Աֆանասիոն այնտեղից հեռացնել , քանի դեռ ուչ չէր... Ես սկսեցի շտապով հագնվել :

Վիկտորիայի սենեակը եւ տերրասը , ուր Բուրունը Աֆանասիոն պահպան էր դրել , պարտէզի վրա էին եւ այնտեղ հասնելու համար կամ մի շարք դատարկ սենեակներ պէտք է անցնէի , կամ թէ տան սովորական մուտքով բակի միջով դէպի պարտէզի դուռը : Ես այս ճամբով գնացի :

(Շարունակելի)

դէն ձայնները կը լսուէին, որ թողոն պարտաւոր է առանց այլ եւայլութեան յարձակիլ ուսու-

Թուսին ուղածն ալ ազէր, ճարոնցիներու այդ քայլը պիտի Թրանսային ստիպէր պատերազմի բռնուիլ, անոր պիտի հետեւէր Անգլիան իր գաշնակիցը մինակ երկու պետութեանց դէմ չը թող նելու համար ու պատերազմը բուրոյրովն ուրիշ կերպարանք առնելով, թերեւս Ռուսիոյ մինչեւ օրս կրամ պարտութիւնները պարտութիւն աւելի խոշոր պատերազմի մը մէջ, որմէ վերջը հաշտութիւնը թերեւս աւելի նըպաստաւոր պայմաններ ստեղծէր: Բայց ինչպէս կերելի Ֆրանսական կառավարութիւնը աւելի լաւ համարեց իր գաշնակիցը, օրինաւոր հիմերու վրայ հիմնը վելով, թողուլ իր բախտին, քան թէ խոշոր և վտանգաւոր արկածներու մէջ մտնիլ ու նոր բազմաթիւ միջնորդներու հետ և բազմաթիւ մարդիկ կորսնցնել:

Այդ շատ հուսահական է որ Թրանսան իր աւելի գերագոյն շահերը վտանգի չենթարկելու համար իր գաշնակիցը լքեց, բայց դժուար թէ միապիտակաւ Ռուսիան մտնայ այդ վարմունքը որ Մատակոսարքինով միասին երկրորդը կը լլայ: Ինչպէս կերելի Ֆրանսական և ռուսական գաշնակցութիւնը պիտի կրնայ երկար տեւել միայն այն պարագային, երբ Ռուսիան պարտութիւն չտեսնուի, յաջեամ պարագային դժուար թէ Ռուսիան չոյն բարեկամական աչքով նայի Թրանսայի, մանաւանդ որ վերջինս դրամ փոխ տալէն ալ գաղտնիքաւ:

Չատկի սօսներու առթիւ յառաջիկայ շորեքը յարձակիլ յնարժում չը պիտի հրատարակուի:

ՀԱՇՈՒՅՏԻՈՒԹԻՒՆ

Ռուսչուքի Աղքատախնամ ընկերութիւնը և Վառնայի թաղական խորհուրդը ստորև սպաղրուած նամակներու հետ մեղ զըրկած են տարեկան ընդարձակ հաշուեցուցակներ հրատարակելու համար: Եարժումի ծաւալին բոլորովին անյարմար ըլլալով այդ տեսակ ընդարձակ հաշուեցուցակներ հրատարակելը որովհետեւ անոնք շատ ընդարձակ տեղ պիտի բռնեն, մենք միայն նամակները կը հրատարակենք հասարակութեան հասկցնելու հա-

մար որ այդ ազգային վարչութիւնները իրենց գրամական գործառնութեանց հաշուեկշիռը գրքած են հասարակութեան տրամադրութեան տակ:

Տէր Խմբագիր

Վարչութիւնն պատու ունի զի միջ Զեր ազնուութեան խնդրելով որ բարեհաճիք Զեր բարեհաճութեան սուղ էջերուն մէջ հրատարակել տեղոյս Աղքատախնամ ընկերութեան միամեայ հաշուեցոյցը, մեր տպագրեալ օրինակին նմանը զոր պիտի գրտնէք ներփակեալ նամակնուս մէջ:

Ռուսի վստահ լինելով ձեր ազնուութեանը զոր պիտի բարեհաճի գոհացում ալ մեր փափաքին կանխաւ կը յայտնեմք մեր խորին շնորհակալիքը:

Ի դիմաց Աղք. Վարչ. Ատենապետ Խ. Մարգարեան Վ. Փափագեան Ռուսչուք

Պատուարժան

Խմբագր. «Նարժում» ազգոգոտ լրագրոյ Աստ.

Ներփակ կը փութամք զրկել Ս. Սարգիս եկեղեցւոյ միամեայ հաշուեկշիռն, խնդրելով որ հաճիք հրատարակել զայն Զեր պատուական լրագրի մօտաւոր թուոյն մէջ մատուցանելով մեր շնորհակալիքը:

Մնամք յարգանքով Ի դիմաց Թաղական խորհրդոյ Ատենապետ Խ. Գ. Քէշտանեան Ս. Ազնաւորեան Վառնա

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Արդարադատութեան նախարարութիւնը յայտարարած է որ պաշտօնի համար եղած խնդրագիրները, որոնք ուղղակի նախարարին կը զրկուին, ուշագրութեան չը պիտի առնուին, եւ նախարարութիւնը զրկուած վկայագիրները պահպանելու պատասխանատուութենէն ինքզինքը ազատ կը համարէ:

Մեզուարուծական ընկերութիւնը ջանքեր կը թափէ Սօֆիայի մէջ մեզուարոյժներու համագումարում մը կազմակերպել, օգոստոս ամսին, որուն մասնակցելու պիտի հրաւիրուին իշխանութեան մէջ գտնուող մեզուարոյժները:

Ֆիլիպպէի նահանգային վարչութեան պաշտօնեաներէն մին Անտրէյ Տուստով մէկ քարթրօն թալի վրայ 10101 խօսքով, Ֆրանսերէն լեզուով նկարագրած է Պալքանեան թերակղզիին լիւնտրուին նկարագրութիւնը: Այդ գործը Տուստով կատարած է ա-

ռանց ո եւ է գործիքի մը, միայն ձեռքով զոր իրենց ստորագրութեամբ կը վկայեն նոյն վարչութեան երեք գրագիրները:

Քարթը 600 Ֆրանքի գնահատուած է և պիտի զրկուի Լիէժի ցուցահանդէսը:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

Եւրոպական մեծ պետութիւններու ի պատասխան յոյն հրոսախմբներուն գազանութեանց առթիւ Բ. Գուռը պատասխանած է՝ որ արդէն Չակօրիչան գիւղի վրայ յարձակող յոյներէն 60 հոծերակալուած են:

Ռուսէն և թուրք յարաբերութիւններու մէջ ցրտութիւն մը կը նկատուի. Ռուսմանիոյ ներկայ կառավարութեան կրօնապաշտօնական օրգանը Թուրքիոյ դէմ կձու յօդուածներ գրել սկսած է:

Հիւլի փաշան անձամբ կը քննէ յոյն հրոսախմբներու կատարած գազանութիւններու խնդիրը:

Ն. Յ. Իրէսսէ թերթը կը հաղորդէ որ իշխան Գիկա Պուրէշի ալպանական ժողովին մէջ առաջարկեր և ընդունել տուեր է Եքօտրայի, Իսկիւպի, Մօնաթրի, Սանիւնայի և Սելանիքի նախահանգներէն առանձին պետութիւն մը կազմելու ծրագիրը:

ՅՐԱՆՍՍ

Պօրտօ քաղաքին մէջ նախագահ Լուպէի ներկայութեանը մեծ հանդէսով կատարուէր է հռչակաւոր կամպէտայի արձանի բացումը:

Ներքին և հրեսիսային Ֆրանսայի մէջ մեծ ձիւն տեղացեր է:

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Ապրիլ 13ին Մոսկուայէն կը հեռագրեն հետեւեալը. Պսկովէն հազար զինուոր բերուած էին Մանչուրիա զրկուելու համար, զինուորներէն մին չի ուզեր վսկոն նստիլ, հակառակ իր սպային խնդրանքին: Վերջապէս սպան հակառակող զինուորը արձանակի հարուածով մը տեղնու տեղը կսպաննէ, առկէ զինուորներուն մէջ իրարանցում կիյնայնայ, կռիւ մը կը փրթի զինուորին և սպային կողմակիցներուն միջեւ. կտրգը կը վերականգնուի քաղաքէն օգնութեան եկած նոր վաշտ մը զինուորներուն շնորհիւ:

Նոյն թուականին «Պլօզո» թերթը կը հաղորդէ որ Բեթերուպուրկի մէջ ձերբակալուած են

աէրօրիստներու երեք գլխաւոր պետեր: Կապառուի որ շուտով ընդհանուր ներում պիտի յայտարարուի կրօնական և քաղաքական յանցաւորներու և յուն վար Յէն սկսեալ բոլոր դատելը կեցնելու համար:

ՌՈՒՍ—ՃԱՐՈՆԱԿԱՆ Պ Ա Տ Ե Ր Ա Ջ Մ

«Տէյլ Մէյլ թերթը կը հաղորդէ որ ռուս նաւատորմիչը իր պատերազմական հիմնատեղը փոխադրած է Հայնան կղզին:

Թօկօ ներկայիս կը պանուի Թօրմօզա կղզիին մօտերը և ինչպէս կերելի հոն կսպասէ ռուս նաւատորմիչը, որը Վլաատիօսթօք երթալու համար անպատճառ այդ կղզիին մօտերէն պիտի անցնի:

ՓՈՒԹԱՅԷՔ ՕԳՏՈՒԻԼ ՈՒ ՕԳՆԵԼ

Համալսարան զիտական ու գրական հանդէսի երկու հատորները (որոնցմէ միայն 50 օրինակներ մնացած են), փոխանակ իրենց «Իրական արժէքովը 22 Ֆրանքի» ծախուելու, «Կը ծախուին 15 Ֆրանքի» միայն:

Աւելորդ է խօսիլ անոր բովանդակութեան շահեկանութեան մասին, որուն վրայ արդէն հայ մասուլի լաւագոյն ներկայացուցիչները ժամանակին շուայած են գնահատանքի անէնէն փայտախոյզները:

Բացի այն որ Համալսարանի երկու կտորները իրենց անթառամ ու հրահանգիչ պարունակութեամբը պիտի ըլլան միշտ ինքնազարգացումով զբաղողներու համայնագիտարանը, այլև լաւագոյն անկիւնը պիտի գրաւեն միշտ փնտռուած և հետաքրքիր գիրքերու մէջ, որոնք պիտի զարգարեն անհատական թէ հասարակական գրադարանները, մնալով ցարդ ամենէն փայլուն նմուշը «Հայ լրագրութեան»:

Համալսարանի գինը տկարացնելով մեր նպատակն է առաջին շուտով տարածել անոր մնացած հատորները հայ ժողովրդին մէջ, որպէս զի իրենց հրահանգիչ նպատակին ծառայեն, երկրորդ գեղեցիկ առիթ մը ընծայել, զայն գնել փութացող ուսումնասէրներուն՝ առանց ո եւ է գոհողութեան, կարենալ օգնելու Մուսի կարօտեալներուն, որովհետեւ զուտ հասոյթին մէկ երրորդ մասը պիտի յատկացուի այդ վերջիններուն: Գնողներու անունները կամ ծածկանունները, ինչպէս որ իրենք փափաքին, հրատարակուելու են «Հայրենիք»-ի նոյն նըպատակով բացած հանգանակութեան ցանկին մէջ:

Սմեն տեղի համար երկու հատորները թղթակազմ 15 Ֆրանք. կարելի է դիմել Եարժումի Խմբագրութեան կամ ուղղակի:

Պաշտաստեան 19 րիւ Վօֆիլին Բարիկ

ОТГОВОРНИКЪ

Мурадъ-Ераносянъ

Печатница «Взаимность» Варна